

3539

ԳՐԱՎԵՆՔ
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ԳԵՂԱՐՎԵՍՏԻ
ՆՈՐԱՆՈՐ ԴԻՐՔԵՐ



778.5

Խ - 26

25 SEP 20

778.5

Խ-26

ԳՐԱՎԵՆՔ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ԳԵՂԱՐՎԵՍԻ ՆՈՐԱՆՈՐ ԴԻՐՔԵՐ

ՌԱԴ. Ա. ԽԱՆՁՅԱՆԻ

գրաւյցը Հայկինոյի գեկավարթերի, ստեղծագոր-
ծական աշխատողների յևլ Հայաստանի
խօրեքդային զբողթերի եւնու

39776 1008
30-026

1568



09.09.1985 1985 09 25

Քլավես 185, հրատ. 3294,
պատ. 345, տիբաժ 2000:
Հանձնված և արտադրության
22 մարտի 1935 թ.: Ստորա-
գրված և տպագրելու 22
մարտի 1935 թ.: Պետհրատի
տպարան, Յերևան Ա Գնունի 4:

Խորհրդային կինեմատոգրաֆիայի
15-ամյակի տոնակատարման առ-
թիվ, ՀԿ(ր)Կ Կենտկոմի քարտու-
ղար ընկ. Խանջյանն ընդունեց Հայ-
կինոյի ղեկավարներին, ստեղծա-
գործական աշխատողներին և Հա-
յաստանի խորհրդային գրողներին ու
զրույց ունեցավ նրանց հետ: Ըն-
դունելությանը ներկա ելին Հայաս-
տանի Ժողկոմի խորհի նախագահ ընկ.
Գուլոյանը, ՀԿ(ր)Կ Կենտկոմի քար-
տուղար ընկ. Ս. Ակոպովը, Յերկո-
մի քարտուղար ընկ. Գ. Հանեսոն-
յանը, լուսժողկոմ ընկ. Ա. Յեղիա-
զարյանը և մամուլի պատասխանա-
տու աշխատողները:

Հայկինոյի աշխատանքների դրու-
թյան և հեռանկարների վերաբերյալ
ստեղծագործական աշխատողների

անունից գործնական բնույթ կրող
խոսք ասեց ոեժիսյոր ընկ. Զ. Ժամ-
հարյանը. այնուհետև արտահայտ-
վեցին ոեժիսյոր Ամասիա Մարտի-
րոսյանը, ասիստենտ է. Գրիգորյա-
նը, ոպերատոր Գարոչ Բեկնազա-
րովը, Հանրապետության վաստ.
դերասան ընկ. Ջանանը և խորհըր-
դային գրողներ ընկ. ընկ. Ս. Զո-
րյանը, Դ. Դեմիրճյանը, Վ. Թոթո-
վենցը և ուրիշները:

Բոլոր արտահայտվողներն ընդդր-
ծելով խորհրդային կինեմատոգրա-
ֆիայի, ինչպես և նրա Հայաստանի
ջոկատի նվաճումները, իրենց կոնկ-
րետ առաջարկություններն ենին
մտցնում Հայկինոյի արտադրանքի
վորակի հետագա բարձրացման մի-
ջոցառումների և այդ ասպարեզուք
իրենց վրա ընկած պարտականու-
թյունների վերաբերյալ:

Հակիրճ յելույթով հանդես յե-
կալ Հայաստանի ժողկոմիսորհի նա-
խագահ ընկ. Ա. Գուլյանը: Առ-
ցիալիստական ուսալիղմը — ասաց

նա, — այն ձիւտ ճանապարհն ե, վո-
րով պետք ե ընթանա խորհրդային
կինեմատոգրաֆիան: Հայկինոն իր
գոյության և գործունեյության ըն-
թացքում ունեցել ե շոշափելի նվա-
ճումներ: Նա տվել ե այնպիսի նը-
կարներ, ինչպես որինակ՝ «Նամու-
սը» և «Գրիգոր»-ը, վորոնք մեր
պատմական վոչ հեռավոր անցյալի
սոցիալ-դասակարգային հարաբերու-
թյունների ու կենցաղի առանձին
կողմերն են պատկերում: Բայց դա
բավական չե, — ասում ե ընկ. Գու-
լյանը: Հայկինոյի արտադրության
միջ մենք չունենք այնպիսի իդեո-
լոգիական և գեղարվեստական բար-
ձրը վորակի գործեր, — ինչպիսիք
են՝ որինակ՝ «Պատյոմկինը» և հատ
կապես «Զապայեվը», — վորոնք ցու-
ցաբերելին Հայաստանի բանվորների
և աշխատավոր դյուզացիների պայ-
քարը ցարիզմի և ապա գահնակցու-
թյան գեմ. մինչդեռ այդ մոմենտն
ունի չափազանց եյական դաստիա-
րակչական նշանակություն: Ժամա-

նակակից թեմատիկան՝ սոցիալիստական, վիթխարի շինարարությունը և անդասակարգ հասարակության համար մղվող պայքարը նույնպես իմաստ անբավարար են արտացոլված մեր կինո-նկարներում:

Այնուհետև ընկ. Գուլոյանը չեցառմ և խորհրդային գրողների, թատերական դերասանների և Հայկինոյի սերտ կազի անհրաժեշտությունը: Վորակով բարձր նկարներ ունենալու հարցը, ասում են ընկ. Գուլոյանը՝ վոչ միայն կախված են տեխնիկական սարքավորումից, այլ դրա հետ միասին կենդանի մարդկանց ճիշտ ու ռացիոնալ դասավորումից և ոդուագործումից: Իհարկե լավ տեխնիկական սարքավորումն ու պայմաններն ունեն իրենց վորոշակի դերը, և կառավարությունն ապագայում միջոցներ ձեռք կառնի նոր և ավելի ընդարձակ կինո-գործարան կառուցելու ուղղությամբ:

Ապա ընկ. Գուլոյանը կանգ և առնում չըջանների կինոֆիլացման հար

ցերի վրա: Վերջացնելով իր խոսքը, ընկ. Գուլոյանը հույս և հայտնում, վոր Հայկինոն կտա մասսաների լաստիքարակության պահանջներին ավելի համապատասխանող, ավելի գեղարվեստական գործեր:

Ջրույցն ամփոփում են ընկ. Խանջյանը: Հայտնի յե այն բացառիկ ուշադրությունը, — ասում են ան ուղությակացրել են մեր կուսակցության առաջնորդները՝ Լենինն ու Ստալինը՝ կինոյին — վորպես կոմմանիստական դաստիարակության կարեվորագույն գեներալից մեկի:

Բավական են չէլ Լենինի հրահանդները Լուսժողկոմատին՝ կինոյի լայն ծավալման վերաբերյալ և արդ առթիվ նրա տված բնորոշումները՝ կոմունիստական գաղափարների սրբայագանդի գործում կիմոյի ունենալիք խոշոր նշանակության մտաքն: Զբավականանալով պաշտոնական առաջադրություններով, Լենինը լուսավորության և արվեստի ֆրոնտի աշխատողների հետ ժամանակին ու-

նեցած զբույցների ընթացքում բաղ-
միցս սրել ե կինոյի զարդացման
խնդիրները։ Լենինի այդ կարգի քո-
լոր ցուցաւմների միջավ կարմիր
քելի նման անցնում ե այն մտքը,
քե կինոն, կուսակցության դեկավա
րությամբ ապահովելով իր աշխա-
տանքի նիշտ դրվածքը, հսկայական
դեր կարող ե խաղալ մասսաների
կոլտուրական ու բաղաքական մա-
կարդակը բարձրացնելու և համաց
սոցիալիզմի համար մղվող պայյքա-
րում ավելի ջերմ, ավելի ակտիվ ու
գիտակից մարտիկներ դարձնելու ի-
մաստով։ Հայանի յե, այնուհետև,
թե ինչպես մեր կուսակցության հա-
մագումարները, յելակետ ունենալով
լենինի և Ստալինի դրույթները՝ ի-
րեց բանաձևերում հատկապն ընդ
գծել են դեպի կինոն ու նրա զարդա-
ցումը հոգատար վերաբերմունք ու-
նենալու կարեռությունը։ Ընկեր
Ստալինը կուսակցության 13-րդ հա-
մագումարում ընդդժելով կինոյի
նշանակությունը, ասաց, վոր՝ «Ի՞-

նոն հանդիսանում ե մասսայական
ազիտացիայի մեծագույն միջոց։
Խնդիրն այդ գործը մեր ձեռքը վերց
նելի ե»։ Ստալինյան այս լոգունքը՝
կուսակցական կազմակերպություն-
ների և կինոյի աշխատողների հա-
մար դառնում ե մարտական լոգունք,
կինոյի Փրոնտի աշխատողներին նոր
թափ ու յեռանդ ե հազորդում և
մղում դեպի նոր նվաճումներ։

Շնորհիվ լենինյան – ստալինյան
ազգային քաղաքականության անչեղ
կիրառման, — մատնանշում և ընկեր
իանշյանը, — շնորհիվ մեր մեծ ա-
սաջնորդ ընկեր Ստալինի հոգատար
վերաբերմունքի դեպի կինո – Փրոն-
տի աշխատանքները, դեպի աղջա-
յին հանրապետություններում կինո-
արդյունաբերություն ստեղծելու և
զարդացնելու գործը, Խորհրդային
Անդրկովկասի, Խորհրդային Հայաս-
տանի բանվորական ու կոլտուտեսա-
կան մասսաները, աշխատավորական

ինտելիգենցիան, դիմավորում են
կինոյի 15-րդ տարեղարձը խոչոր
նվաճումներով:

Հայաստանի բանվորների և աշխա
տավորական մասսաների ջախջախիչ
հարվածներով մահվան դատապարտ
ված դաշնակի թափթփուկները, վո-
րոնց սոցիալական հենակետները մեր
յերկրում վերջնականապես վոչնչաց
վում են կուլտնտեսական հաղթական
շինարարության պրոցեսում, այսոր
ել չեն դադարում հուսակտուր վայ-
րահաջել Հայաստանում «կուլտուրա-
յի կործանման» մասին: Ըստ Եյու-
րյան, նրանց այդ բամբասանքի են
վորոնում, — չեշտում ե ընկ. Խամիջ-
յանը, — ազգայնական իդեոլոգիայի
ազդեցության յենթակա առանձին
ինտելիգենտներ մեզ մոտ, կյանքից
և իրականությունից կորված մար-
դիկ, յերբ ասում են, վոր իրք թե՝
«փոքր ժողովուրդները հնարավորու-
թյուն չունեն իրենց կուլտուրան և
դրականությունը զարդացնելու և
կուլ են գնալու մեծ ժողովուրդնե-

րին»: Այս դեմագոգիան փասորին
արտահայտում է նացիոնալիստական
տարրերի դժգոհությունն ազգային
կուլտուրայի զարգացման լենինյան-
ստալինյան սկզբունքի դեմ: Մարդիկ
չեն ցանկանում հաշտվել ազդային
ձեռվ անընդհատ բարդավաճող մեր
կուլտուրայի ՍՈՅԻՍԼԻՍՏԿԱՆ բո-
վանդակության հետ, այդ բովան-
դակությունն իրենց նացիոնալիստա-
կան քիմքեն չի դալիս, այդ պատճա-
ռով ել նրանք բռնում են կեղծիքի և
դեմագոգիայի ուղին: Պետք և աշա-
լուրջ ու անխնա ջախջախել նացիո-
նալիստական այդ նվոցները, — ա-
սում ե ընկեր Խանջյանը:

Պրոլետարական հեղափոխության
չնորհիվ բոլոր ճնշված ժողովուրդ-
ները հնարավորություն ստացուն
ստեղծելու և զարգացնելու ձեռվ աղ-
գային, բովանդակությամբ սոցիա-
լիստական կուլտուրա: Պրոլետարա-
կան ինտելիգենցիոնալիզմի հիման վրա
Խորհրդային Միության բարձարե-
զու ժողովուրդների միջև ստեղծվել

և կուլտուրական ամենասերտ համաց գործակցությունը։ Այն ամենը, ինչ վոր ուղղվում է այդ համագործակցության դեմ, պետք է անխնան մերկացվի ու հարվածվի։ Մեր բոլոր նվաճումներն անխսիր, վորոնց թըզում նաև կուլտուրական շնչարարության, գեղարվեստի և գրականության ասպարիզում, ձեռք ենք բերել վիճական պայքար մղելով թե՛ հույկական նացիոնալիզմի դեմ, իոր ներկայումս մեզ մոտ սուր վուանգ և հանդիսանում է թե՛ մեծապետական շովինիզմի դեմ։ Յեկ այդ պայքարը պետք է ավելի ուժեղ քափով շարունակել նացիոնալիզմի բոլոր սկսակի արտահայտությունները թերում լոեղելու համար։

Անցնելով Հայկինոյի աշխատանքներին, ընկեր Խանջյանը նկատում է, վոր Խորհրդային Հայաստանի կուլտուրական շնչարարության նվաճումների մեջ իր աչքի ընկնող տնկն

ունի նաև կինոն։ Այստեղ մենք ըստեղծել ենք խորհրդային կինեմատոգրաֆիայի հայաստանի ջոկատը, վորն իր ստեղծման և զարգացման ընթացքում ոգտագործելով Ռուսաստանի առաջատար կինեմատոգրաֆիայի կուսակած մեծ փորձը, միենույն ժամանակ լայն հնարավորություններ ունի հարստացնելու և հարըստացնում ե Խորհրդային Միության կինոյի ասպարեզը։ Իր զարգացման ճանապարհին Հայկինոն ունեցել է խոչըն նվաճումներ։ Նա տվել է այնպիսի աչքի ընկնող գործեր, ինչպիսիք են մեր վաստակավոր կինո-ռեժիսյոր ընկ. Բնեկնազարյանի «Նամուսը», «Զար վոգին», «Խաս-փուշը», «Զարեն», Մարտիրոսյանի «Գիքորը», «Մեքսիկական դիպլոմատները» և ուրիշներ։ Մեծ սպասելիքներ ունենք շուտով ավարտվող «Պեպոլից»։

Սակայն, քիչ չեն նաև այնպիսի նկարներ, — շարունակում ե ընկեր Խանջյանը, վորոնք թե՛ իդեոլոգիա-

կան և թե՛ գեղարվեստական տեսա-
 կետից միանդամայն խոցելի յեն հան
 դիսանում և արտահայտել են բուր-
 ժուական եստետիկայի աղդեյու-
 թյունը մեր կինեմատոգրաֆէայի
 վրա : Այսպես, Պերեստիանու «Անու-
 շը» վոչ միայն կոպիտ կերպով աղա-
 վաղում և թումանյանի այդ գեղեցիկ
 գործը, այլև իր վրա կրում և փար-
 մալիզմի ցայտուն կնիքը : Ուժիսյորը
 չի ըմբռնել այն իրականությունը,
 վորի արտահայտությունն և հանդի-
 սանում թումանյանի «Անուշը» և
 կարիկատուրային ձևով մոդերնիզա-
 ցիայի յե յենթարկել այն : Հայկե-
 նոն ավել և մի շարք նկարներ, վո-
 րոնք աչքի յեն ընկնում իրենց սխե-
 մատիզմով և տաղտկալիությամբ,
 չեն տալիս իրականության նիշտ
 պատկերացումը, զուրկ են հուզա-
 կանությունից և աններգործունակ
 են : Հայկենոյի պրոդուկցիայի մեջ
 յեղակի չեն նույնպես այնպիսի նը-
 կարներ, վորտեղ ուղարկմբ փոխա-
 րինվում և նատուրալիստական կենցա

դագրությամբ, մի արատ, վոր ցայ-
 տուն կերպով հանդես ե յեկել զայ-
 կինոյի զարդացման առաջին ետապ-
 ներում և դեռ մինչև վերջը չի հաղ-
 թահարված :

Հայկենոյի հաջողված նկարների
 մեծամասնությունն այն նկարներն
 են, վորոնք հանվել են մեր կլասիկ-
 ների յերկերի հիման վրա, իսկ մեր
 հեղափոխական անցյալը և մասնա-
 վորապես մեր սոցիալիստական հոյա
 կապ շինարարությունը մինչև այժմ
 դեռ շատ աղոտ են արտադրվել Հայ
 կինոյի արտադրանքներում : Մեր հե-
 ղափոխական անցյալին նվիրված յե-
 րեք նկարները՝ «Զամալլուն», «Հա-
 շիմը» և «Յերկու գիշերը» միջակ և
 միջակից ցածր նկարներ են հանդի-
 սանում : «Հաշիմում» աղավաղված և
 մեր պատմական անցյալը, «Զամալ-
 լուն» իր գեղարվեստական պրիոմ-
 ներով և ձևերով պրիմիտիվ և մի-
 ենույն ժամանակ նրանում հանդես
 են գալիս նացիոնալիստական մի
 շարք տարրեր (պայքարը վրաց մեն

շեմիների դեմ հաճախ նկարում վերածվում է պայքարի՝ վրացիների դեմ ընդհանրապես) :

Այնուհետև ընկեր Խանջյանը հատ կապես կանգ ե առնում մայիսյան ապստամբությանը նվիրված «Յերկու դիշեր» նկարի վրա: Նկարում ապստամբության շարժիչ ուժերը, — ասում ե նա, — տրված են սխեմատիկ կերպով, շտամպային ձևերով: Այդ նկարում չկան կենդանի խարակ տերներ, վորոնք զարգանային տիպիկ հանգամանեներում, մի պահանջ, վորը կազմում ե ուսալիութի կարևոր հասկանիշներից մեկը: Այս պես, որինակ, «Յերկու դիշերի» հիմնական հերոսի՝ Մուսայելյանի խարակտերը տրված ե աղոտ և նրա հոգեկան ասլրումներն ու գործողությունները գեղարվեստորեն չեն պատճառաբանված: Հեղափոխական գործիչները հանդեռ են դալիս ինչպես ստանդարտ և վորպես խարակտերներ շատ քիչ են տարրերվում իրարից: Մեր հակառակորդները պատ-

16

կերպած են վոչ ուսալիստորեն, կարիկատուրային ձևերով, վորը նկարում թուլացրել ե այն դժվարությունները, վորի պայմաններում չայստանի բանվորներն ու գյուղացիները հերոսարար պայքարել են դաշնակցական դաժան լծի դեմ: Այս նկարը, վորն իր ժամանակակից հանդիսանում է հեղափոխական - պատմական նկար, չի կարողացել այդ պատմական փոնը պատկերել նիշտ կերպով և խարակուելները վոչ թե ձուլվում ու պայմանավորվում են այդ պատմությամբ, այլ գործում են նրան գորգահեռ, և դա կազմում է նկարի հիմնական թերությունը: Նկարում խարակտերների սոցիալական հոգերանությունը նույնպես չի բացահայտվում գործողությունների մեջ և տիպիկ հանդամանքներում, այլ այդ խարակտերների մեծ մասը պատկերացվում է պատրաստի և նկարի վերջում նրանք այն են, ինչ վոր նկարի սկզբան:



ԵՎԵՐԱԿԱՆԻ ԿԱՆոնադրություն 1976 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

17

Խանջյանը, — բոլոր հաջողված ու
չաջողված նկարների մասին խռովել
այստեղ : Վերոհիշյալ որինակնողի
վրա յես ձեր ուշադրությունը հրավի
րեցի, վորպեսզի դուք խորհրդային
կիննմատոգրաֆիայի տասնինգե-
րարդ տարեդարձին, ձեր անցած ըս-
տեղծագործական ուղիների և փոր-
ձի ուշիմ քննադատության միջո-
ցով, հետագայում խուսափելով
քույլ տված սխալներից, այնուհիսի
քափով և վորպակով առաջ մղեք ձեր
աշխատանքը, վորպեսզի ավելի բար-
ձր աստիճանի վրա դրվի մեր կի-
ննմատոգրաֆիան :

* * *

Մեր մասսաների գեղարվեստական
պահանջներն այնպիսի չափերով ա-
ճել են, — շարունակում ե ընկ . Խան-
ջյանը, — վոր յերեկվա մեր նվա-
ճումները բնավ չեն կարող մեզ հան
դըստացնել : Մեր հանճարեղ առաջ-
նորդ ընկեր Ստալինը կինո-Փրոնտի
աշխատողներին գրած իր հայտնի

նամակում տալիս ե մեր կինո-Փրոն-
տի հետագա աշխատանքի մարտա-
կան ծրագիրը, նա գծագրում ե կի-
նոյում սոցիալիստական ուժակամի
հաղթանակի ուղիները : Ընկ . Ստա-
լինի պահանջը՝ «Զապայելի» նման
Փիլմեր տալու վերաբերում ե Խոր-
շըրդային Միության կիննմատոգր-
րաՓիայի բոլոր ջոկատներին, նաև
ազգային կիննմատոգրաՓիային : Յեկ
այսոր, Հայաստանի Կոմունիստական
կուսակցության Կենտրոնական Կո-
միտեն մեկնակետ ունենալով ընկեր
Ստալինի իմաստուն ու վնիտ ցուց-
մունքները, Հայկինոյի առջև պա-
հանջ ե դնում՝ տալ «Զապայելի»
պես, նրա իդեոլոգիական ու գեղար-
վեստական անաղարտությամբ և ու-
ժով նկարներ : Հայկինոն ունի՞ այդ
հնարավորությունները : Այդ հարցին
կարելի յե տալ միայն մի պատմա-
խան : ԱՅՈ : Հարուստ ու հերոսական
ե, — ասում ե ընկ . Խանջյանը, — Հա-
յաստանի բանվորների ու աշխատա-
վոր գյուղացիների պայքարը դաշ-

նակցական մղմավանջային տիրակա-
լության դեմ : Բավական ե հէնչէլ
մայիսյան փառապանծ ապստամբու-
թյունը, քաղաքացիական կովի Փը-
րոնտները, փետրվարյան դաշնակ-
ցական ավանոյուրայի շրջանում
Դամարլուի և Ախտայի Փրոնտներում
Հայաստանի բանվորների ու գյուղա-
ցիների հերոսությունները . Մի քե-
մատիկա, վորը կարող ե պատմա-
հեղափոխական հրաշալի նկարների
նյութ ծառայել :

Մեր արվեստագետները հարկ յե-
ղած չափով ուսումնասիրե՞լ են այդ
հեղափոխական անցյալը, հարկ յե-
ղած չափով ճանաչե՞լ են այդ սն-
ցյալը : Դժբախտաբար, ՎՈԶ : Յիշ
հենց այդ ե պատճառը, վոր մեր
պատմա - հեղափոխական նկարները
մեծ մասամբ դուրս են յեկել անար-
յուն, սխեմատիկ, մակերեսային և
վոչ գեղարվեստական : Այելին : Մին
չե վերջին տարիները մեր մի շարք
արվեստագետների ուղեղում շրջում
եր այն «տեսությունը», վոր իւր

թե հնարավոր չեղափոխական ու
ժամանակակից թեմատիկայի հի-
ման վրա ստեղծել արվեստի մեծ
գործեր, և այդ եր պատճառը, վոր
մի շարք ուժիսորներ իրենց գործու-
նելությունը սահմանափակում եյին
միմիայն կլասիկների գործերը նկա-
րահանելով :

Խորհրդային կինեմատոգրաֆիայի
զարգացումն իր պրակտիկայով վա-
ղուց և փշրել այդ «տեսությունը»,
վորը սոցիալիստական շինարարու-
թյունից վախուսատ կազմակերպելու
մի արահետ և հանդիսանում : Յեկ
այսոր հրամայական խնդիր և ,—ընդ
դում և լնկեր խանջանիր,— վոր-
պեսզի մեր կինո-ֆրոնտի աշխատով-
ները կլասիկների լավագույն գործեր
նկարահանելուց ձեռք չվերցնելով
հանդերձ, իրենց ուշադրության հիմ
նական առանցքը դարձնեն կինոյի
միջոցով պատկերելու մեր հեղափո-
խական անցյալը և երա հետ սերտո-
րեն կապված սոցիալիստական շինա-
րարության այսորը . մի ասպարեզ,

վորտեղ դժբախտաբար յերկու վուն-
եով կազում ե Հայկինն:

Խորհրդային իրականությունը, սո
ցիալիզմի կառուցման յերկիրը, վոր
տեղ բանվոր դասակարգը Կոմունիս-
տական կուսակցության դեկավագուռ
թյամբ կաղմակերպել ե համաշխար-
հային պատմական նշանակություն
ունեցող տեղաշարժեր, վորտեղ մենք
սոցիալիստական նոր հարաբերու-
թյունների հիման վրա գտել ենք
վողջ աշխարհը փոխելու հենարանը,
վորտեղ բնության տարերային ու-
ժերը սանձահարվում և ծառայում
են ազատագրված մարդկության ող-
տին, վորտեղ արմատախլվում են
կապիտալիզմի վերջին մնացորդներն
եկոնոմիկայից ու մարդկանց գիտուկ
ցության միջից՝ խորհրդային արվես
տագետը բախտավոր ե նաև նրանքի,
վոր նա իր ստեղծագործության հա-
մար կգտնի անսպառ և ամենահե-
տաքրիր թեմատիկան, յերե նա ա-
մուր կերպով կապված ե մեր սո-
ցիալիստական շինարարության պը-

րակտիկայի հետ: Իսկ յեթե նա չէ
կապված այդ շինարարությանը՝
կյանքը կանցնի նրա կողքից, —ասում
ե ընկեր Խանջյանը:

Մեզնում ևս կան այդպիսի ար-
վեստագետներ, վորոնք զանազան
պատրվակներով իրենց ստեղծագոր-
ծության մեջ կույր են ձեւանում մեր
սոցիալիստական առորյայի հանդես,
չվում են դեպի պատմության հե-
ռուները, սակայն այդ պատմու-
թյունը տալիս են վոչ թե բանվոր
դասակարգի պայքարի ու հեղափո-
խական պրակտիկայի այսորվա բար
ձունքներից, այլ վորպես «ինքնա-
նպատակ», իսկ հաճախ նացիոնալիս
տական գունավորությամբ, ներկա-
յից խուսափելու և անցյալի իդեա-
լականացման մարմաշներով: Անցյա-
լի՝ վորպես դասակարգային պայքա-
րի պատմության՝ մարքսիստական
ըմբռնումն ու պատկերումը նույն-
պես կաղմակելու յէ մեր արվեստի պատ-
վակոր թեմաներից մեկը: Սակայն
նրանք, ովքեր դիմում են անցյալին

վոչ թե այդ կերպ նիշտ պատկերելու այն, այլ ներկայից փախուստ տալու համար, այդպիսիները հենց առաջին իսկ ժայլից դատապարտված են անհաջողության:

Սակայն չարաչար սիսալ կլիներ կարծել, — ասում ե ընկ. Խանջյանը, — թե յուրաքանչյուր արվեստագետ, վորն իր ստեղծագործության համար վերցնում ե ժամանակակից թեմա, արդեն դրանով իսկ ապահովում ե իր յերկի գեղարվեստական վորակը: Թե՛ կինոյի և թե՛ գրականության բնադրավառում քիչ չեն այնպիսի որինակներ, յերբ գրողը կամ սցենարիան ու սեդիսյորն իրենց ստեղծագործության որյեկաը դարձնելով նոր թեմատիկան, յեր իրականությանը մոտենալով մակերսուսորեն, աղավաղում են այդ իրականությունը: Վերցը հետեւ հայկինոյի նկարներից՝ «Լույսեր և ըստ վերները», «Կիկոսը», վորոնք կոպիտ կերպով աղավաղում են մեր իրականությունը:

Մեր Խորհրդային կինեմատոգրաֆիան, — շարունակում ե լնկ. Խանջյանը, — նախքան «Չապայելը», հսկայական «Չապայելը»՝ զողված նկարների կողքին տվել է քաղաքացիական կուլտների թեմատիկայով մի շարք անհաջող, սիսմատիկ նկարներ:

Վորն ե «Չապայելի» հաջողության գաղտնիքը: Խնչո՞վ ե նա տարբերվում նույնականի թեմատիկա ունեցող անհաջող նկարներից: Այս հարցի պատասխանը տալիս պետք է չետել, վոր թեմատիկան սերտորեն շաղկապված ե ստեղծագործական մեթոդի հետ և կազմում ե սովոր մի բաղկացուցիչ մասը: Սոցիալիստական սեալիզմը, վորը կաղմում ե խորհրդային գրականության հիմնական մեթոդը, ցայտուն կերպով հանդես ե գալիս «Չապայել» պոլիտիկան աղավաղում: Պատմական յերնկինո-նկարում: Պատմական յերնկինո-նկարի նիշտ պատկերացումը, կոնկրետ և կենդանի խարակտերներն

իրենց տիպիկ հանգամանքներում, գաղափարական հազեցվածությունն ու չտեսնված հուզականությունը, գեղարվեստական բարձր վարպետությունը կազմում են այդ սխանչալի նկարի բնորոշ գծերը։ Այստեղ իսպառ բացակայում է սխեմատիզմը, ուեալիստական գծերով պատկերացվել են վոչ միայն մերոնք, այլև մեր հակառակորդները. մի հանգամանք, վորը գեղարվեստորեն ցույց է տալիս, թե ինչպիսի դժվարություններով մենք հաղթել ենք քաղաքացիական կոլիզներում։ Նկարի հիմնական իդեան՝ կուսակցության կողմից կիսապարտիզանական տարերային շարժումը կազմակերպված հունի մեջ դնելու պրոցեսը՝ նկարում ներկայացված են ճիշտ ու հարազատ կերպով։ Վոչ միայն հիմնական, այլև յերկրորդական խարակտերները արված են իրենց զարգացման մեջ, նրանք գեպքերի ու գործողությունների պրոցեսում փոփոխության են յենթարկվում։ Նկարի կա-

բեռ կողմերից մեկն ել այն եւ, վոքնա մեր հեղափոխական անցյալը տալով սոցիալիստական շինարարության պրակտիկայի բարձունքից, այդ անցյալը կապում ե այսորվա հետ և մասսաներին տալիս ե ոպտիմիստական նոր լիցե—վաղվա պայքարի համար։ Նկարի չտեսնված, ներգործող նշանակությունը պայմանավորվում է նրա իդեական՝ գեղարվեստական բարձր վորակով։ Այդ տեսակետից, — չեշտում ե ընկ. Խանջյանը, — «Զապայելվն» որինակ պետք է ծառայի վոչ միայն կիմոյի, այլև արվեստի մյուս նյուուների ու գրականության ֆրոնտի մեր աշխատողների համար։

Քննելով Հայկինոյի պրոդուկցիան ժանրերի տեսակետից, անհրաժեշտ ենք գտնում ընդգծել, — ասում ե ընկ. Խանջյանը, — վոր, բացի կինոդրամայից, Հայկինոն պետք ե հատուկ ուշադրություն դարձնի նաև

կինո-կոմեդիայի և սատիրայի լու-
տեղծման վրա :

Մեր բանվորների ու կոլտնտեսա-
կանների, մեր յերիտասարդության
համար անհրաժեշտ է կենսախինդա
կուլտուրական կոմեդիա, վորը վոչ
միայն առաջնացնի ուրախ ծիծաղ,
վորը վոչ միայն կազմակերպի նրանց
հանդիսութ, այլև նպաստի նրանց
դաստիարակմանը : Մեր կոմեդիան
պետք է տարբերվի բուրժուական
«անբոլանդակ» կոմեդիայից : Խոր-
հրդային կոմեդիան հանդիսանում
է վոչ միայն բացասական յերեսությ-
ութիւնի ժխտման, այլև դրական ար-
ագիրի հաստատման գեղարվեստական
միջոց : Խորհուրդների յերկրումն է,
վոր ազատազրված մասսաները ժշգ
տում են ուրախ ժպտով, ծիծաղում
են առողջ և կենսախինդ ծիծաղով .
և մեր մասսաների այդ ուրախ ժպի-
տը, կենսախինդ, սպոմիմիստական
ծիծաղը պետք է զգացվեն նաև խոր-
հրդային ուրախ ու ժպտացող կի-
նոնկարները դիտելիս :

Սատիրան, մասնավորապես քաղա-
քական սատիրան, նույնպես չպետք
է թերագնահամատել, այլ պիտի զար-
դացնել ու ողտագործել՝ վորպիս
մեր դասակարգային հակառակորդ-
ներին մերկացնելու և հարվածելու
դեղարվեստական կարեոր զենքներից
մեկը :

Պետք է հատուկ ուշադրություն
դարձնել նաև մանկական Փիլմերի
ստեղծման վրա, մանավանդ վոր այս
ուղղությամբ Հայկինոն վոչ մի աշ-
խատանքով աչքի չի ընկնում :

Ամփոփելով իր խոսքի ստեղծա-
գործական հարցերին վերաբերող
մասը, ընկեր Խանջյանը չեշտում է,
վոր Խորհրդային արվեստի աշխա-
տողներից պահանջվում է իրենց գոր
ծերում տալ մեր սոցիալիստական
շինարարության հերոսն իր խսկական
դեմքով, իր իրական հատկություն-
ներով . նրանք այդ կարող են կատա-
րել և պետք է կատարեն, յեթե ու-
սումնասիրեն, նաևաչեն մեր կյանքը
և լիաննչուն կերպով արտահայտն

այդ կյանքի նշմարտությունը։ Իսկ դա հնարավոր է սոցիալիստական շինարարության պրակտիկայի հետ կապվելու, այդ շինարարության ակտիվ կերպով մասնակցելու միջոցով։



Այսուհետև ընկեր Խանջյանը կանգ ե առնում կինեմատոգրաֆիայի հետագա զարգացման և ծավալման կուղմակերպչական մի շարք կոնկրետ խնդիրների վրա։ Հայկինոն, — առում ե նա, — կադրերի առաջքաշման և պատրաստման ասպարիզում ունեցել ե զգալի նվաճումներ։ մեղնում աճել են կինո — արդյունաբերության դեկավարների, ոեժիսյորների, սցենարիստների, կինո — ոպերատորների, կինո — դերասանների, յերաժիշտների կադրեր, սակայն այդ կադրերի վորակն այսոր լրիվ չե կարող բավարարել մեր կինեմատոգրաֆիայի զարգացման պահանջները։ Դրա համար առանձին ուշադրու

թյուն պետք ե դարձնել մեր կինոկադրերի թե՛ ֆարաֆական և թե՛ մասնագիտական վորակավորման վրա։ Վորակավոր ու վարպետ սցենարիստների պակասը պետք ե լրաց-վի նաև մեր գրողներին՝ կինո-սցենարիստներ գրելու գործին ակտեվ կերպով մասնակից դարձնելու միջնով։ Փաստ ե և այն, վոր չնայած մենք ունենք չնորհալի դերասաններ, սակայն կինո — դերասանի նոր կաղը բեր աճեցնելու խնդիրը Հայկինոյի կողմից խիստ թերագնահատվել ե։ Պետք ե վերջ տալ այդ բացին, լավ գիտակցելով, վոր առանց վորակյալ կինո — դերասանների հնարավոր չե կենդանի խարակտերներ ստեղծել։ Յես այլևս չեմ խսում կինո — ֆինադատության մասին, վորն խսպառ բացակայում ե մեղնում, մինչդեռ այդ ֆենադատության դերը շատ մեծ է մեր կինեմատոգրաֆիայի զարգացման ասպարիզում։

Հայկինոյի, ինչպես նաև մեր ըլբ-ջանային որդանների աշխատանքը

թույլ և կինոֆիկացիայի բնագավառ-
ում: Դեռ միանգամայն անբավա-
րար և մշտական կինո - թատրոննե-
րի ցանցը շրջաններում և գյուղե-
րում, անկանոն ու անկազմակերպ և
գյուղական շրջիկ կինոն: Այս ուղ-
ղությամբ խոշոր անելիքներ կան:
Յանցի հետագա աճումը, այդ ցան-
ցի կուլտուրական սպասարկման խռի
դիրք մասնավորապես ԳՅՈՒՂՈՒՄ,
մտնում են մեր կինոֆիկացիայի աշ-
խատանիների հետագա կարևորա-
գույն ողակների շարքը: Այս ուղ-
ղությամբ հատուկ ուշադրությունը
պիտի և դարձնել գյուղ ուղարկվող
նկարների վորակի, նկարներիմ զու-
գակցող քաղլուս. աշխատանիքի, մե-
խանիկների վորակյալ կադրեր ստեղ-
ծելու և կինո - թատրոնների ու մ-
այլարատների սարքավորման վրա:
Կինոֆիկացիայի ասպարիզում մաս-
նավորապես վատ և դրված աշխա-
տանին ազգային փոքրամասնություն-
ների մեջ, և այս խոշոր բացը պետք
է լրացնել:

Կինո - արտադրության կազմա-
կերպման, մասնավորապես տեխնի-
կական վերակառուցման խնդիրները
պակաս կարևորություն չեն ներկա-
յացնում կինո - պլոդուկցիայի վո-
րակի ապահովման համար: Ճիշտ և,
Հայկինոն իր կինո - տեխնիկայով
վեռ գտնվում և ցածր աստիճանի
վրա: Կառավարությունը միջոցներ
ձեռք կառնի մեր կինո - արդյունա-
բերության համապատասխան տեխ-
նիկական սարքավորման ուղղու-
թյամբ: Բայց չպետք ե մոռանալ,
վոր յեղած տեխնիկական հենարակո-
ւությունների լիակատար յուրացման
գծով ել դեռ շատ անելիքներ կան:



Վերջացնելով իր խոսքը, ընկեր
Խանջյանը շեշտում է, վոր կինոն,
այդ «ամենակարևոր» (Լենին) և «ա-
մենամասսայական» արվեստը, ունի
«մասսաների վրա հոգևոր ազդեցու-
թյուն գործելու բացառիկ հենարակո-
ւություններ» (Ստալին): Մեր լո-

վագույն կինոնկարներն իրենց բարձը գեղարվեստական վորակով, զաղափարական հագեցվածությամբ, իրականության ճիշտ, ռեալիստական պատկերացմամբ հսկայական դեր ևն կատարում մասսաների կոմունիստական դաստիարակության գործում: Ինչպես մեր գրականությունն ու վողջ արվեստը, նույնպես և կինոն, արտահայտում են սոցիալիզմի կառուցող մասսաների պայքարը, սաեւությունը դեպի հինը և հեղափոխական թափն ու ոպտիմիզմը դեպի մեր հեռանկարները: Խոշոր են մեր կինոմատոգրաֆիայի ձեռք բերած նվաճումները, սակայն ե'լ ավելի պատասխանառ յեն այն խնդիրները, վորոնէ դրված են այսոր նրա առջև: Խորիրդային կինոմատոգրաֆիայի տասնինգամյակը պետք է խրանի հանդիսանա մեր կինո-ֆրոնտի աշխատողներին — նոր քափով ու կրքի նապատկած յեռանդրվ շարունակելու պայքարը սոցիալիստական գե-

դարվեստի նորանոր դիրքեր գրավելու համար, մարտականորեն իրագործելով մեր մեծ առաջնորդ ընկեր ՍՏԱԼԻՆԻ պատգամները:



ՀՀ Ազգային գրադարան



NL0306163

ԳԻՒԸ 30 ԿՐՊ.

